

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Միսակ Արմոյի Ավագյան

տն. թ., դոցենտ

ՀԵՀ, Կառավարման ամբիոն

misakav@rambler.ru

Ամփոփագիր

Միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ պարբերաբար ի հայտ են գալիս տարածաշրջանային և գլոբալ այնպիսի հիմնախնդիրներ, որոնցից չեն կարող զերծ մնալ աշխարհի երկրների մեծ մասը: Այդ հիմնախնդիրները, որոնք առկա են տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, հնարավոր է հաղթահարել միայն երկրների հավաքական ջանքերի և համակարգված ու կառուցողական գործընթացների շնորհիվ: Այդ հիմնախնդիրների շարքում կարևոր դեր ունի միջպետական տնտեսական հարաբերություններին մասնակցող արժույթային փոխարժեքի կայունության ապահովումը, որին ուղղված քայլերից է օպտիմալ արժույթային գոտիներ ձևավորումը:

Արժույթային ինտեգրման ներկայիս միտումները, որոնք պայմանավորված են տնտեսական կյանքի միջազգայնացմամբ, տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների ակտիվացմամբ և միջազգային արժույթային համակարգում արժույթային կարգավորման խնդիրների սրմամբ, առաջնային են դարձնում օպտիմալ արժույթային գոտիների ձևավորման, դրանց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմանների և չափանիշների ապահովումն ու բարելավումը: Վերջինիս հիմքում ընկած են օպտիմալ արժույթային գոտիների տեսական հիմնադրույթները, որոնց վերաբերյալ մոտեցումները, ինտեգրացիոն գործընթացների զարգացմանը զուգընթաց, անընդհատ փոփոխվում են: Հոդվածում ներկայացվել են օպտիմալ արժույթային գոտիների դասական տեսությունների շրջանակներում վեր հանված չափանիշներն ու դրանց առանձնահատկությունները, կատարվել այդ չափանիշների վերաբերյալ տարբեր տեսակետների համադրում և դրանց հիման վրա գնահատվել օպտիմալ արժույթային գոտիների դասական չափանիշների արդիականությունը:

Հիմնաբառեր. օպտիմալ արժույթային գոտի, արժույթային ինտեգրում, օպտիմալության չափանիշ, արժույթային փոխարժեք, արտադրության գործոնների շարժունակություն, փոխարժեքային կարգավորում, տնտեսական հավասարակշռություն:

Ներածություն

Օպտիմալ արժույթային գոտիների (տարածքների) վերաբերյալ սկզբնական հիմնադրույթները հիմք են հանդիսացել արժույթային փոխարժեքի տարբեր ռեժիմների մասին հետազոտությունների իրականացման համար:

Վերջիններիս առաջին փուլը կոչվեց «պիոներական», որում մեծ դեր է ունեցել Ռ. Մանդելլը, որը 1961թ. հրատարակած «Օպտիմալ արժույթային գոտիների տեսություն» հոդվածով սկիզբ դրեց տվյալ խնդրի հետ կապված լայնածավալ քննարկումներին: Նա «օպտիմալ

արժույթային գոտի» հասկացությունը ներկայացնում էր որպես միասնական արժույթի օգտագործմամբ կամ ազգային արժույթների միջև ֆիքսված պարիտետի և փոխարժեքի ռեժիմի պայմաններին առավելապես հարմարեցված երկրների միավորում, իսկ արժույթային տարածքը՝ որպես տիրույթ (դոմեն), որի շրջանակներում փոխարժեքները միմյանց նկատմամբ ֆիքսված են, իսկ դոմենից դուրս գտնվող արժույթների նկատմամբ ներքին արժույթները պահպանում են ճկուն փոխարժեքի ռեժիմ [Mundell, 657]:

Ուսումնասիրության նպատակն է օպտիմալ արժույթային գոտիների դասական չափանիշների վերլուծությունը և դրանց գործնական կիրառելիության գնահատումը: Հետազոտության օբյեկտն են օպտիմալ արժույթային գոտիների չափանիշները, առարկան՝ դրանց տեսական վերլուծությունը: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական գրականության տեսական վերլուծության, համադրման և ընդհանրացման մեթոդները:

Օպտիմալ արժույթային գոտիների վերաբերյալ առաջին տեսությունների ձևավորման և զարգացման գործում մեծ դեր են ունեցել նաև հայտնի տնտեսագետներ Մ. Ֆրիդմանը (1953թ.), Ռ. ՄակԲիննոնը (1963թ.), Ջ. Ինգրամը (1969թ.), Փ. Քենենը (1969թ.), Ն. Մինցը (1970թ.), Ջ. Ֆլեմինգը (1971թ.) և այլոք, որոնք իրենց հետազոտությունների ընթացքում ներկայացրել են օպտիմալ արժույթային գոտիների գործունեության հետևյալ հիմնական չափանիշները.

1. գների և աշխատավարձի ճկունություն
2. արտադրության գործոնների, այդ թվում՝ աշխատուժի շարժունակություն
3. ֆինանսական շուկաների ինտեգրում
4. տնտեսական բացության աստիճան

5. արտադրության և սպառման բազմազանեցում
6. հարկաբյուջետային ինտեգրում
7. գնաճի տեմպերի նմանություն
8. քաղաքական ինտեգրում:

1. Գների և աշխատավարձի ճկունություն: Դեռևս Մ. Ֆրիդմանի կողմից առաջ քաշված և հետագայում Ռ. Մանդելի կողմից հիմնավորված օպտիմալության առաջին չափանիշը գների և աշխատավարձի ճկունությունն է, որն ընկած է ֆիքսված և լողացող արժույթային փոխարժեքների առավելությունների և թերությունների վերաբերյալ քննարկումների հիմքում: Ըստ այս չափանիշի փաստարկի՝ եթե արժույթային գոտում գները և աշխատավարձերը ճկուն են, ապա տնտեսական ճգնաժամի ընթացքում հնարավոր կլինի փոքր պահանջարկ ունեցող տարածաշրջանում խուսափել գործազրկության աճից, իսկ բարձր պահանջարկ ունեցող տարածաշրջանում՝ գների աճից, և այդ դեպքում տնտեսական հավասարակշռության ապահովման համար կնվազի անվանական փոխարժեքի ճշգրտումներ իրականացնելու անհրաժեշտությունը: Հակառակ դեպքում, եթե գները և աշխատավարձերը կայուն են, ապա անհրաժեշտ կլինի դիմել արժույթային փոխարժեքի ճշգրտումներին: Գների և աշխատավարձի ճկունությունը կարևոր է հատկապես կարճաժամկետ հատվածում՝ շուկերից հետո կարգավորման գործընթացները հեշտացնելու համար [Mongelli, 8-9]:

2. Արտադրության գործոնների, այդ թվում՝ աշխատուժի շարժունակություն: Ռ. Մանդելի կողմից ներկայացված արտադրության գործոնների շարժունակությունը ևս համարվում է արժույթային գոտու օպտիմալության կարևոր չափանիշ: Երբ աշխատուժը տարածաշրջանի՝ գործազրկության բարձր մակարդակ ունեցող երկրներից տեղաշարժվում է դեպի գործազրկության ցածր մակար-

դակ ունեցող երկրներ, ապա տարածաշրջանում ապահովվում է աշխատավարձերի և արտադրության ծախսերի համահարթեցում: Կապիտալի ազատ տեղաշարժը նույնպես կրճատում է տարածաշրջանային անհավասարակշռությունները: Դա նշանակում է, որ արժույթային գոտու անդամ երկրների շրջանակներում արտադրության գործոնների շուկայի ինտեգրման բարձր մակարդակը նվազեցնում է տնտեսական շուկերի ընթացքում այդ երկրների միջև անվանական փոխարժեքների փոփոխության անհրաժեշտությունը [Mundell, 661]: Եթե *և՛* աշխատուժը, *և՛* կապիտալը շարժունակ չեն, ապա ֆիքսված փոխարժեքը չի կարող հանգեցնել տարածաշրջանի տնտեսական արդյունավետության բարձրացմանը, և այդ դեպքում նպատակահարմար չի լինի արժույթային գոտու ձևավորումը: Այս առումով, Ու. Քորդենը գտնում է, որ աշխատուժի շարժունակությունը նվազեցնում է արժույթային միության ծախսերը, սակայն այն չի հանդիսանում փոխարժեքի ճկունությանը փոխարինող կատարյալ գործոն: Ըստ նրա՝ աշխատուժի շարժունակությունը կարճաժամկետ հատվածում ցածր է՝ պայմանավորված միգրացիայի և վերապատրաստման ծախսերով, իսկ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում այն կարող է լինել ավելի բարձր՝ նպաստելով մշտական շուկերի կարգավորմանը: Ինչ վերաբերում է կապիտալի շարժունակությանը, ապա, ըստ նրա, այն կարող է հանգեցնել արժույթային միության հիմնական խնդրի՝ ներքին և արտաքին համաժամանակյա հավասարակշռության ապահովմանը միայն կարճաժամկետ հեռանկարում: Ու. Քորդենը միաժամանակ եզրակացնում է, որ մաքսային միության գործունեության պարագայում փոխարժեքային տատանումների անհրաժեշտությունը կարող է մեծանալ, քանի որ տվյալ դեպքում սակագները և ներմուծման սահմանափակումներն

այլևս կիրառելի չեն որպես վճարային հաշվեկշռի կարգավորման գործիքներ [Corden 15, 40, 41]:

3. Ֆինանսական շուկաների ինտեգրում: Ըստ Ջ. Ինգրամի՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել արժույթային գոտու օպտիմալացման այնպիսի չափանիշի վրա, ինչպիսին է ֆինանսական շուկաների ինտեգրման բարձր մակարդակը, քանի որ ֆինանսական շուկաների ինտեգրման դեպքում արժույթային գոտու՝ ռեցեսիայի մեջ գտնվող տնտեսապես թույլ մասնակից երկրի համար հասանելի են դառնում գոտու անդամ մյուս մասնակից երկրների առավել մատչելի ֆինանսական ռեսուրսները, ինչը նվազեցնում է փոխարժեքային կարգավորումների անհրաժեշտությունը՝ տնտեսական հավասարակշռությունը վերականգնելու համար [Ingram, *Comment* 96]: Ֆինանսական ինտեգրման բարձր մակարդակի պայմաններում տոկոսադրույքի նույնիսկ չնչին փոփոխությունները կարող են հանգեցնել գործընկեր երկրների միջև կապիտալի հավասարակշռված շարժին՝ դյուրինացնելով արտաքին անհավասարակշռության ֆինանսավորումը, ինչպես նաև նպաստելով ռեսուրսների բաշխման արդյունավետության բարձրացմանը [Ingram, *Mechanisms*, 631]: Չնայած նրան, որ ընդհանուր ֆինանսական շուկան նաև կրճատում է երկարաժամկետ տոկոսադրույքների սփրեղը և կապիտալը դարձնում է հասանելի, այնուամենայնիվ, պետք է նշել, որ այս ինստիտուտը չի փոխարինում դրամավարկային և ֆինանսաբյուջետային քաղաքականության մշտական փոփոխություններին, այլ ընդամենը այդ գործընթացը դարձնում է առավել սահուն [Волков, 73]:

4. Տնտեսական բացության աստիճան: Ռ. ՄակՔիննոնի կողմից արժույթային գոտու օպտիմալության չափանիշ է համարվում տնտեսության բացության աստիճանն ու չա-

փր: Ընդ որում, որքան բարձր է տնտեսական բացության աստիճանը, այնքան արտահանվող և ներմուծվող ապրանքների միջազգային գների փոփոխություններն ավելի մեծ չափով են անդրադառնում կենսապայմանների վրա: Նա նշում է, որ արժույթային գոտու լավագույն մասնակիցը փոքր բաց տնտեսություն ունեցող երկրներն են՝ վերջինս հիմնավորելով այն հանգամանքով, որ երկրների նշված խմբի համար հաճախ ձեռնտու չէ դրամավարկային անկախության պահպանումը, քանի որ նրանք չեն կարող ազդել մրցունակության վրա, կատարել գործարքներ արժույթային շուկայում, իսկ նրանց առևտրային մեծ հոսքերը պահանջում են մեծ ծախսեր՝ արժույթային ռիսկերը զսպելու համար: Սակայն քանի որ փոքր բաց տնտեսության դեպքում պետության կողմից լողացող փոխարժեքի կիրառումը կայունացնող ազդեցություն չի ունենում, փոխարժեքի տատանումները հիմնականում բացասաբար են անդրադառնում գների կայունության վրա և չեն նպաստում տնտեսական զարգացմանը, հետևաբար, անվանական փոխարժեքի ճշգրտումները՝ որպես կարգավորման գործիք, չեն կարող լինել արդյունավետ: Այսպիսով, որքան բաց և փոքր է տնտեսությունը, այնքան ավելի մեծ է փոխարժեքի ֆիքսման և արժույթային միության ստեղծման դրական էֆեկտը [McKinnon, 722]:

5. Արտադրության և սպառման բազմազանեցում: Փ. Քենենը օպտիմալ արժույթային գոտու չափանիշ է համարում արտադրության (արտահանման) և սպառման (ներմուծման) բազմազանեցումը, որի բարձր մակարդակը, ըստ նրա, նվազեցնում է ասիմետրիկ շուկերի առաջացման հնարավորությունը, թուլացնում դրա հնարավոր ազդեցությունը տնտեսության վրա և նպաստում ներդրումային հոսքերի, գների մակարդակի և զբաղվածության կայունացմանը [Kenen, 48]: Ըստ Փ. Քենենի, վերջինս խթան է հանդիսանում, որպեսզի

արտադրության բազմազանեցման առավել բարձր մակարդակ ունեցող երկրները միավորվեն արժույթային գոտու մեջ՝ ձևավորելով միասնական արժույթ:

6. Հարկաբյուջետային ինտեգրում: Փ. Քենենը պետությունների հարկաբյուջետային համակարգերի ինտեգրումը նույնպես համարում է օպտիմալ արժույթային գոտիների ձևավորման կարևոր չափանիշ: Ըստ նրա՝ որքան բարձր է հարկաբյուջետային ինտեգրման մակարդակը, այնքան ավելի մեծ է հնարավորությունը մեղմելու տնտեսական շուկի ազդեցությունը՝ գործազրկության ցածր մակարդակ ունեցող երկրներից գործազրկության բարձր մակարդակ ունեցող երկրներ բյուջետային փոխանցումների միջոցով, ինչը հանգեցնում է շուկեր կրող մասնակից երկրների տնտեսական կարգավորումների համար անվանական փոխարժեքի փոփոխությունների իրականացման անհրաժեշտության նվազմանը, տնտեսական կայունացմանը ու մակրոտնտեսական հավասարակշռության վերականգնմանը [Kenen, 53]: Անդրադառնալով այս խնդրին՝ Գ. դե լա Դեհեսան նույնպես կարծում է, որ արժույթային միությունը պետք է ունենա հարկաբյուջետային միություն, ընդհանուր գանձարան և ընդհանուր հարկաբյուջետային քաղաքականություն կամ, որպես այլընտրանք, մեծ բյուջե կամ առնվազն մեծ հիմնադրամ՝ անդամ պետությունների միջև հարկաբյուջետային ազատությունից խուսափելու և ընդհանուր ու ասիմետրիկ շուկերը վերացնելու համար [De la Dehesa, 11]: Փ. Քենենին հակադրվում է Ու. Քորդենը՝ նշելով, որ արժույթային ինտեգրումը չի պահանջում հարկաբյուջետային ինտեգրում, քանի որ կառավարությունները բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կարող են իրականացնել միության շրջանակներում գործող կապիտալի շուկայում փոխառություններ ներգրավելու միջոցով՝ միաժամանակ նշելով, սակայն, որ արդ-

յունավետ կարճաժամկետ կառավարումը կարող է պահանջել ընդհանուր բյուջետային քաղաքականության որոշակի ներդաշնակեցում կամ վերահսկողություն [Corden, 40-41]: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ հարկաբյուջետային ինտեգրման համար անհրաժեշտ է երկրների կողմից ինտեգրման քաղաքական կամք և բյուջետային միջոցների բաշխման պատրաստակամության բարձր մակարդակ:

7. Գնաճի տեմպերի նմանություն: Ջ. Ֆլեմինգը օպտիմալ արժույթային գոտու չափանիշների շարքին ավելացնում է ևս մեկը՝ գնաճի տեմպերի նմանությունը՝ նշելով, որ արտաքին անհավասարակշռություններ կարող են առաջանալ նաև ներքին գնաճի տեմպերի մշտական տարբերություններից, որոնք ի հայտ են գալիս, մասնավորապես, կառուցվածքային զարգացումների անհամապատասխանություններից, աշխատաշուկայի ինստիտուտների բազմազանությունից և սոցիալական տարբեր նախապատվություններից: Ջ. Ֆլեմինգը փաստում է, որ արժույթային գոտու մասնակից երկրների միջև գնաճի կայուն և միանման տեմպերը նպաստում են առևտրի պայմանների կայունացմանը, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է ընթացիկ հաշիվների գործարքների և առևտրի հաշվեկշռի հավասարակշռմանը և կրճատում անվանական փոխարժեքային ճշգրտումների անհրաժեշտությունը: Ջ. Ֆլեմինգն առանձնացնում է գնաճի միանման տեմպերի հաստատման այնպիսի պայմաններ, ինչպիսիք են զբաղվածության քաղաքականությունների նմանությունը, տնտեսական աճի տեմպերի նմանությունը և արհիմությունների դիրքորոշումների նմանությունը [Fleming, 470]:

8. Քաղաքական ինտեգրում: Որոշ տնտեսագետների կողմից արժույթային ինտեգրման քաղաքական կամքը համարվում է միասնական արժույթի ներդրման կարևորագույն պայմանը: Այս առումով, Ն. Մինցը նշում

է, որ արժույթային համակարգերի միավորման հարցում պետությունների քաղաքական պատրաստակամությունը մեծ խթան է հանդիսանում տնտեսական կոնվերգենցիաներին հասնելու համար՝ հնարավորություն տալով հեռանկարում մակրոտնտեսական ցուցանիշները համապատասխանեցնել օպտիմալ արժույթային գոտու մնացած չափանիշներին [Mintz, 23]:

Այսպիսով, Ռ. Մանդելը, Փ. Քենենը և Ռ. ՄակՔիննոնը, հանդիսանալով օպտիմալ արժույթային գոտիների տեսության հիմնադիրները և ուսումնասիրելով արժույթային միությունների ձևավորման բնույթը, սահմանեցին մի շարք տնտեսական չափանիշներ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել պետությունների դրամավարկային համակարգերի ինտեգրում: Ֆիքսված արժույթային փոխարժեքի և միասնական արժույթին անցում կատարելու քաղաքականության համեմատական առավելությունների ուսումնասիրությունների վրա հիմնված հետազոտությունները հաստատեցին, որ արժույթային փոխարժեքը հանդիսանում է տնտեսական հավասարակշռությունը վերականգնելու արդյունավետ գործիք, եթե.

1. երկրները ենթարկվում են ասիմետրիկ շոկերի, որոնք պահանջում են այդ երկրներում արտադրվող ապրանքների համեմատական գների փոխադարձ համապատասխանեցում,
2. ներքին գները ամբողջությամբ ճկուն չեն. հետևաբար արագորեն չեն հարմարվում շոկերին,
3. ներքին գներն անմիջապես չեն ինդեքսավորվում՝ կապված փոխարժեքի տատանումների հետ, այսինքն՝ փոխարժեքի փոփոխության արդյունքում համեմատական գների փոփոխությունները անմիջապես չեն չեզոքացվում ներքին գների տեղաշարժերով,

4. հարմարեցման այլ մեխանիզմները, ինչպես օրինակ՝ արտադրության գործոնների շարժունակությունը կամ ֆիսկալ ֆեդերալիզմը, բացակայում են կամ ունեն ոչ մեծ դերակատարում [Чаплыгин, 130-131]:

Արժույթային գոտիների օպտիմալության չափանիշների բացահայտումը հանդիսանում է «պիոներական» փուլի հիմնական ձեռքբերումը՝ չնայած այն հանգամանքին, որ դրանք ունեն լրացուցիչ մեկնաբանությունների և վերլուծությունների կարիք՝ պայմանավորված մի շարք թերությունների առկայությամբ: Նախ, օպտիմալության չափանիշների մի մասը չափելի չէր, ինչը հնարավորություն չէր տալիս միանշանակ գնահատել վերջիններիս դերը օպտիմալ արժույթային գոտիների ձևավորման գործում: Մյուս կողմից, միասնական արժույթի ստեղծման տեսական նախադրյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած դրանց վերաբերյալ տեսությունների հիմնադրույթների հարաբերական տրամաբանական ներդաշնակությանը՝ այդ նախադրյալները բավականին վերացական են և հաճախ չեն համապատասխանում իրականությանը, իսկ առանձին չափանիշների վրա հիմնված արժույթային գոտիների օպտիմալության վերաբերյալ եզրակացությունները երբեմն հակասում են այլ չափանիշներով ստացված արդյունքներին [Мискин, 73]: Այսպես, Փ. Ռոբսոնը նկատում է, որ օպտիմալ արժույթային գոտու մի քանի չափանիշներ էկոնոմետրիկ մեթոդներով դժվար է միանշանակորեն չափել, ինչը հնարավորություն չի տալիս դրանք համեմատել և համադրել միմյանց հետ [Robson, 241]: Ջ. Թավլասն, իր հերթին, վեր է հանում օպտիմալ արժույթային գոտու վերոնշյալ փուլի չափանիշների միջև առկա անհամապատասխանությունները՝ նշելով, որ, օրինակ, Ռ. ՄակՔիննոնի կողմից որպես արժույթային գոտու օպտիմալության լավա-

գույն չափանիշ համարվող տնտեսության բացության աստիճանը հակասում է Փ. Քենենի կողմից ներկայացված արտադրության բազմազանեցման չափանիշին, քանի որ եթե ըստ Ռ. ՄակՔիննոնի՝ արժույթային գոտու լավագույն մասնակից է համարվում փոքր բաց տնտեսություն ունեցող երկիրը, որը, որպես կանոն, ունի մասնագիտացման և արտադրության բազմազանեցման ցածր մակարդակ, ապա Փ. Քենենը գտնում է, որ օպտիմալ արժույթային գոտի ձևավորելու համար պետք է միավորվեն արտադրության բազմազանեցման բարձր մակարդակ ունեցող երկրները, որոնք առավելապես բնորոշ են խոշոր տնտեսություններին, հետևաբար, ըստ Փ. Քենենի, նախընտրելի է, որ խոշոր տնտեսությունները վարեն ֆիքսված, իսկ փոքր տնտեսությունները՝ ճկուն փոխարժեքի քաղաքականություն [Tavlas, 224]:

Մեկնաբանելով Ռ. Մանդելի կողմից առաջ քաշված արտադրության գործոնների շարժունակության վերաբերյալ դրույթը՝ Ռ. ՄակՔիննոնը նշում է, որ վերջինս Ռ. Մանդելի կողմից համապարփակ վերլուծության չի ենթարկվել, քանի որ, ըստ Ռ. ՄակՔիննոնի՝ արտադրության գործոնների շարժունակության գործոնների հիմնադրույթն ունի երկու ասպեկտ՝ տարածաշրջանների միջև շարժունակության աշխարհագրական գործոնը և արտադրության տարբեր ճյուղերի միջև շարժունակության գործոնը: Ռ. ՄակՔիննոնը գտնում է, որ Ռ. Մանդելն իր աշխատության մեջ նկատի է ունեցել միայն առաջին գործոնի մեկնաբանությունը, որի շրջանակներում կատարված վերլուծությունը վերաբերել է միասնական արժույթ ունեցող տարածաշրջանների ներսում աշխարհագրական շարժունակության վերաբերյալ հարցին՝ տարածքների միջև շարժունակության պակասը լրացնելու համար [McKinnon, 724]:

Ռ. Մանդելի՝ արտադրության գործոնների շարժունակության վրա հիմնված օպտիմալ արժույթային գոտիների արդյունավետությունը կասկածի տակ է առնում նաև Փ. Քենենը, որը գտնում է, որ այդ չափանիշը լավագույնը չէ այդ գոտիների գործունեության ապահովման համար՝ նշելով, որ ազգային տնտեսության բազմազանեցումը և մեկ երկրում բազմաթիվ միառնությունային տարածաշրջանների առկայությունը ավելի լավ չափանիշ է, քան աշխատանքային ռեսուրսների շարժունակությունը, և այդ համատեքստում հիմնավորում է, որ.

- բազմազանեցման բավարար մակարդակ ունեցող տնտեսությունում առևտրի պայմանները այնքան հաճախակի չեն փոխվում, որքան միառնություն ազգային տնտեսությունում,
- արտահանվող հիմնական ապրանքների նկատմամբ պահանջարկի նվազման պայմաններում բազմազանեցված տնտեսությունը բազմազանեցման ցածր մակարդակ ունեցող տնտեսության համեմատ գործազրկության էական աճ չի ունենա,
- տնտեսության բազմազանեցումը թույլ է տալիս կայունացնել կապիտալի ձևավորման գործընթացը [Kenen, 53-54]:

Փ. Քենենը եզրակացնում է, որ տնտեսության բազմազանեցումը շուկերի ոչ ամբողջական հաղթահարման արդյունքում պատճառված վնասները հասցնում է նվազագույնի: Ըստ նրա՝ տնտեսության բազմազանեցման չափանիշը հանդիսանում է արտադրության գործոնների ներքին շարժունակության առաջացման նախադրյալ, որի վրա էլ հենց հիմնվում է Ռ. Մանդելը, քանի որ միայն երկրում բազմաթիվ ոլորտների առկայության դեպքում է հնարավոր հասնել զբաղվածության առավելագույն մակարդակի յուրաքանչյուր ա-

ռանձին մասնագիտության համար [Kenen, 58-59]:

Ըստ Հ. Ֆուկուդայի՝ թերություններ ունի նաև գնաճային տեմպերի նմանության չափանիշը: Նախ, գնաճային նմանեցման գործընթացների արագությունը կախված է տնտեսության կառուցվածքային բազմաթիվ առանձնահատկություններից, որոնք կարող են փոփոխվել արժույթային միությանը երկրի անդակացություններից հետո: Այդ առումով, օտիմալության այս չափանիշը կարող է ունենալ էնդոգենության հատկություն: Եվ երրորդ, այն հակասում է Ֆիլիպսի կորի տեսությանը, որն արտացոլում է հավասարակշռված հարաբերակցություն գնաճի և գործազրկության միջև, այսինքն՝ կախված ընտրված քաղաքականությունից՝ որոշ երկրների համար ցածր գործազրկության պայմաններում օպտիմալ կարող է համարվել գնաճի առավել բարձր մակարդակը, իսկ մյուսների համար ընդհակառակը՝ գնաճի տեմպերի նվազեցումը կարող է պահանջել գործազրկության մակարդակի որոշակի աճ: Այս դեպքում գնաճի տեմպերի և գործազրկության միջև հարաբերակցության տարբերությունները կարող են հարթվել փոխարժեքի փոփոխման միջոցով, ինչը, սակայն, սահմանափակում է երկրի՝ արժույթային գոտուն միանալու հնարավորությունները [Fukuda, 14]:

Ինչ վերաբերում է ֆինանսական շուկաների ինտեգրման չափանիշին, ապա ըստ Ս. Դրոբիշեվսկու և Դ. Պոլեվոյի՝ վերջինիս վերաբերյալ քննարկումների համատեքստում տարբերակված չեն վճարային հաշվեկշռի «ֆինանսավորում» և «ճշգրտում» հասկացությունները, քանի որ եթե վճարային հաշվեկշռի անհաշվեկշռվածությունը պայմանավորված է ներմուծման և արտահանման արժեքային ծավալների տատանումներով, ապա կապիտալի ազատ տեղաշարժը հնարավորություն է տալիս ֆինանսավորել ի հայտ եկած

այդ անհաշվելի շնորհիվ, սակայն նման ֆինանսավորումը չի վերացնում տնտեսության իրական հատվածի խնդիրները, որոնք ստեղծում են նման անհաշվելի շնորհիվ [Дробышевский, Полевой 24]: Բացի այդ, Թ. Ջապելլին և Մ. Պազանոն, իրենց հերթին, կարծում են, որ ներքին ֆինանսական շուկաների կոնվերգենցիան կարող է թյուր պատկերացում տալ ֆինանսական ինտեգրման աստիճանի և ֆիրմաների ու տնային տնտեսությունների ֆինանսական հասանելիության վրա դրա իրական ազդեցության մասին: Ըստ նրանց, զարգացած ֆինանսական շուկաները փոխում են շուկայի վրա տնտեսության արձագանքման միջոցները այնքանով, որքանով դրանք հնարավորություն են տալիս ֆիրմաներին կապիտալի ֆինանսական շուկաներն օգտագործելու ներքին ներդրումները ֆինանսավորելու, իսկ տնային տնտեսություններին՝ խնայողությունները արտասահմանում ներդնելու համար [Jappelli, Pagano 3,7]:

Եզրակացություն

Ամփոփելով, հարկ է նշել, որ օպտիմալ արժույթային գոտիների չափանիշներից որևէ մեկը չի կարող համարվել գերակա և որոշիչ արժույթային գոտու արդյունավետությունը ապահովելու գործում: Այն կախված է տվյալ արժույթային գոտու առանձնահատկություններից, մասնակից երկրների զարգացման մակարդակից, քաղաքական կամքից, յուրաքանչյուր առանձին արժույթային գոտու գործունեության առավելությունների ու թերությունների գնահատումից և դրա բացասական հետևանքների նվազեցումից: Բացի այդ,

ժամանակի ընթացքում, օպտիմալ արժույթային գոտիների չափանիշների որոշ առանձնահատկություններ, տարածաշրջանային ինտեգրման գործընթացների և միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, կարող են ենթարկվել փոփոխությունների, ինչը նշանակում է, որ այդ չափանիշները կարող են համարվել էնդոգեն: Դա ենթադրում է, որ արժույթային գոտու օպտիմալությունը կարող է ձևավորվել երկրների միջև արժույթային ինտեգրումից ոչ թե առաջ, այլ՝ հետո: Արժույթային ինտեգրման արդի օրինաչափությունները միաժամանակ ցույց են տալիս, որ ներկայումս այդ գործընթացներում կարևորվում են ոչ այդքան միկրոտնտեսական մակարդակում գործող արտադրության գործոնների ներտարածաշրջանային շարժունակությունը, որքան մակրոտնտեսական այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են՝ մասնակից երկրների տնտեսական և արժույթավարկային քաղաքականությունների կոորդինացումը, ներդաշնակեցումն ու միասնականացումը, տնտեսական զարգացման մակարդակների մոտարկումը, ինչպես նաև կարգավորող վերապետական մարմինների արդյունավետ գործունեության ապահովումը:

Այսպիսով, օպտիմալ արժույթային գոտու տեսությունների զարգացման առաջին՝ «պիտերական» փուլի չափանիշներն ունենին առավելապես տեսական, քան գործնական բնույթ, որոնց գծով հետագայում իրականացվեցին էմպիրիկ գնահատումներ և երկրների՝ գոյություն ունեցող կամ նորաստեղծ արժույթային միություններ մտնելու առավելությունների և թերությունների էկոնոմետրիկ մոդելավորում:

Գրականության ցանկ

1. Corden W.M. “Monetary Integration”. Essays in International Finance, International Finance Section No. 93, Princeton University, Department of Economics, Princeton, New Jersey, April 1972, p. 46
2. De la Dehesa G. “A Self-Inflicted Crisis? Design and Management Failures Leading to the Eurozone Crisis” Occasional Paper, 2012, № 86. Group of Thirty, Washington, D.C. p. 72

3. Fleming J.M. “On Exchange Rate Unification”. The Economic Journal, 1971, vol. 81, no. 323, pp. 467–488
4. Fukuda H. “The Theory of Optimum Currency Areas: An Introductory Survey”. Mita Festival Paper, Keio University, Faculty of Economics, 2002.
<http://www.clb.econ.mita.keio.ac.jp/kaji/mitafest/fukuda.pdf>
5. Jappelli T., Pagano M. “Financial market integration under EMU”. European Economy, Economic Papers 312, European Communities, March 2008, p. 42
6. Kenen P.B. “The Theory of Optimum Currency Areas: Area: An Eclectic View”. Monetary Problems of the International Economy, ed. by R.A. Mundell, A.K. Swoboda. Chicago: University of Chicago Press, 1969, pp. 41–60
7. Ingram J.C. “Comment: The Currency Area Problem”. Monetary Problems of the International Economy. ed. by R.A. Mundell, A.K. Swoboda. – Chicago: University of Chicago Press, 1969, pp. 95–100
8. Ingram J.C. “State and Regional Payments Mechanisms”, in Quarterly Journal of Economics, vol. 73, Issue 4, November 1959, pp. 619–632
9. McKinnon R.I. “Optimum Currency Areas”. American Economic Review, 1963, vol. 53, pp. 717–725
10. Mintz N.N. “Monetary Union and Economic Integration”. The Bulletin. N.Y.: New York University, 1970, No. 64, p. 36
11. Mongelli F.P. ““New” Views on the Optimum Currency Area Theory: What is EMU Telling Us?” ECB, Working Paper No 138. April 2002, p. 53
12. Mundell R.A. “A Theory of Optimum Currency Areas”. American Economic Review, vol. 51, Issue 4, 1961, pp. 657-665
13. Robson P. “The Economics of International Integration”. London, Allen and Unwin, 1987, p. 333
14. Tavlas G.S. “The Theory of Monetary Integration”. Open Economies Review, 1994, vol. 5, no. 2, pp. 211-230
15. Волков А.М. “Теория оптимальных валютных зон и асимметрические шоки: практические аспекты на примере европейской валютно-экономической интеграции”. Проблемы современной экономики (Новосибирск), 2010, № 2-1, сс. 72-76
16. Дробышевский С.М., Полевой Д.И. Проблемы создания единой валютной зоны в странах СНГ. М.: ИЭПП, 2004, с. 110
17. Мискин А.С. “Современные тенденции развития единых валют”. Известия Томского политехнического университета, Инжиниринг георесурсов, 2008, Т 312, N 6, сс. 71-75
18. Чаплыгин В.Г. “Генезис валютно-финансовой интеграции”. Вестник Оренбургского государственного университета, 2003, N 6, сс. 129-133

CLASSICAL APPROACHES TO EVALUATION OF CURRENCY AREAS' OPTIMALITY CRITERIA

Misak Avagyan

PhD in Economics, Associate Professor

EUA, Chair of Management

misakav@rambler.ru

Abstract

Along with the development of international economic relations, such regional and global issues regularly appear that most of the world's countries cannot avoid. These issues, which exist in almost all spheres of economic life, can be overcome only thanks to the collective efforts of countries and coordinated and constructive processes. Among those issues, ensuring the stability of the currency exchange rate

participating in interstate economic relations plays an important role, and one of the steps aimed at it is the formation of optimal currency areas.

The current trends of currency integration, which are caused by the internationalization of economic life, the activation of regional integration processes and the aggravation of currency regulation problems in the international monetary system, make the creation of optimal currency areas, the provision and improvement of the conditions and criteria necessary for their effective operation, a priority. The theoretical foundations of optimal currency zones, approaches to which are constantly changing along with the development of integration processes, are based on the latter. The article presents the criteria and their features within the classical theories of optimal currency areas, combines different points of view regarding these criteria and evaluates the relevance of the classical criteria of optimal currency areas based on them.

Keywords: optimal currency area, currency integration, criterion of optimality, foreign exchange rate, mobility of production factors, exchange rate regulation, economic equilibrium.

Ներկայացվել է՝ 11.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 14.11.2022թ.